

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԵՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏԻ

Ք. Երևան

09 փետրվարի 2010թ.

Ժ. 11.00

Մասնակցում էին՝

Երևանի ավագանու 41 անդամներ

Երևանի ավագանու նիստին հրավիրված էին՝ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Մելքումյանը, Երևան քաղաքի գլխավոր ճարտարապետ Ս. Դանիելյանը, աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Չ. Առաքելյանը, աշխատակազմի եկամուտների գանձման և հաշվառման վարչության պետ Գ. Ջակոբյանը, աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Վ. Նիկոյանը, աշխատակազմի կրթության վարչության պետ Գ. Սողոմոնյանը, աշխատակազմի մշակույթի, երիտասարդության հարցերի, սպորտի և տուրիզմի վարչության պետ Է. Թումանյանը, աշխատակազմի արտաքին ձևավորման և գովազդի վարչության պետ Ա. Չարությունյանը:

Նիստը վարում էր Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Տարոն Մարգարյանը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Երևանի ավագանու երրորդ նստաշրջանի ժամանակավոր հաշվիչ հանձնաժողով կազմավորելու մասին:
2. Օրակարգի հաստատման մասին:
3. Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 23-ի հ.55-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին:
4. Երևան քաղաքի 2009 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվության վերաբերյալ անկախ աուդիտ անցկացնելու մասին:
5. Երևան համայնքի մի շարք առևտրային կազմակերպություններն անվանափոխելու մասին:
6. Գույքահարկի արտոնություն սահմանելու մասին:
7. Մի շարք համայնքային ոչ առևտրային կազմակերպություններ անվանափոխելու մասին:

8. <<Ժամանակակից արվեստի թանգարան>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության մեջ փոփոխություն կատարելու մասին:

9. Երևան քաղաքի գլխավոր հատակագծի ճշգրտման տեխնիկական առաջադրանքին հավանություն տալու մասին:

3.1 **ԼՍԵՑԻՆ** - Երևանի ավագանու երրորդ նստաշրջանի ժամանակավոր հաշվիչ հանձնաժողով կազմավորելու մասին:

Ներկայացվեց ժամանակավոր հաշվիչ հանձնաժողովի կազմում ընդգրկվելու համար <<Հանրապետական>> և <<Բարգավաճ Հայաստան>> խմբակցությունների ղեկավարների կողմից ներկայացված անդամների ցանկը.

Սուրեն Ներսիսյան - <<Հանրապետական>> խմբակցություն

Մանվել Ավետիսյան - <<Հանրապետական>> խմբակցություն

Արմեն Հակոբյան - <<Բարգավաճ Հայաստան>> խմբակցություն

Իշխան Դարբինյան - <<Բարգավաճ Հայաստան>> խմբակցություն

ՈՐՈՇՎԵՑ - Հաստատել Երևանի ավագանու երրորդ նստաշրջանի ժամանակավոր հաշվիչ հանձնաժողովի հետևյալ կազմը /հավելված/:

3.2 **ԼՍԵՑԻՆ** - Օրակարգի հաստատման մասին:

ՈՐՈՇՎԵՑ - Հաստատել Երևանի ավագանու երրորդ նստաշրջանի 09.02.2010թ. նիստի օրակարգը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ - կողմ - 41

դեմ - 0

ձեռնպահ - 0

Որոշումն ընդունվեց միաձայն

3.3 **ԼՍԵՑԻՆ** - Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 23-ի հ.55-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 23-ի <<Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման 2010 թվականի ծրագրի վերաբերյալ>> № 55-Ն որոշման հավելվածի 4-րդ գլխի 28-րդ կետի 1-ին ենթակետի <<ա>> պարբերության ցանկը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 299-րդ կետով.

<<

299.	Կաթսայատուն Խորենացու 26 Ծանոթություն՝ սույն կետում նշված կաթսայատունը համաձայն ՀՀ կառավարության 2008թ. նոյեմբերի 20-ի թիվ 1405-Ն որոշման, ենթակա է օտարման գերակա հանրային շահ ճանաչված տարածքի ձեռք բերող <<Նուևե Նալբանդյան>> ՍՊԸ-ին :	162.0	137.5
------	----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------	-------	-------

>>:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

3.4 **ԼՍԵՑԻՆ** - Երևան քաղաքի 2009 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվության վերաբերյալ անկախ աուդիտ անցկացնելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան քաղաքի 2009 թվականի բյուջեի կատարման հաշվետվությունն աուդիտ անցկացնելու նպատակով ներգրավել աուդիտորական կազմակերպություն:

2. Հաստատել սույն որոշման 1-ին կետում նշված նպատակով ձեռք բերվող աուդիտորական ծառայության տեխնիկական բնութագիրը համաձայն հավելվածի:

3. Առաջարկել Երևանի քաղաքապետին <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի բ/ կետի համաձայն մեկ անձից գնման ձևով ձեռք բերել աուդիտորական ծառայություն՝ սույն որոշման 2-րդ կետով հաստատված տեխնիկական բնութագրին համապատասխան

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ - կողմ - 41

դեմ - 0

ձեռնպահ - 0

Որոշումն ընդունվեց միաձայն

3.5 **ԼՍԵՑԻՆ** - Երևան համայնքի մի շարք առևտրային կազմակերպություններն անվանափոխելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - Անվանափոխել Երևան համայնքի ենթակայության մի շարք առևտրային կազմակերպությունները՝ համաձայն հավելվածի:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին սահմանված կարգին համապատասխան իրականացնել սույն որոշման հավելվածում նշված կազմակերպությունների ֆիրմային

անվանման պետական գրանցման հետ կապված անհրաժեշտ գործառույթներ և ձևակերպումներ:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ - կողմ - 41
դեմ - 0
ձեռնպահ - 0

Որոշումն ընդունվեց միաձայն

3.6 ԼՍԵՑԻՆ - Գույքահարկի արտոնություն սահմանելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. <<Դիակոնիա>> բարեգործական հիմնադրամին սեփականության իրավունքով պատկանող Աշտարակի խճուղի, <<Յուլսի ավան>> թաղամասում գտնվող գույքի համար տրամադրել գույքահարկի գծով արտոնություն՝ 4,185,305 (չորս միլիոն մեկ հարյուր ութսունհինգ հազար երեք հարյուր հինգ) դրամի չափով, որից ապառք՝ 3,506,600 (երեք միլիոն հինգ հարյուր վեց հազար վեց հարյուր) դրամ, տույժ՝ 678,705 (վեց հարյուր յոթանասունութ հազար յոթ հարյուր հինգ) դրամ:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ - կողմ - 41
դեմ - 0
ձեռնպահ - 0

Որոշումն ընդունվեց միաձայն

3.7 ԼՍԵՑԻՆ - Մի շարք համայնքային ոչ առևտրային կազմակերպություններ անվանափոխելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Անվանափոխել Երևանի մի շարք համայնքային ոչ առևտրային կազմակերպությունները՝ համաձայն հ. 1 հավելվածի:
2. Հաստատել սույն որոշման հ. 1 հավելվածում նշված համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների կանոնադրությունները՝ նոր խմբագրությամբ՝ համաձայն հ. 2 հավելվածի:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ կողմ - 41
դեմ - 0
ձեռնպահ - 0

Որոշումն ընդունվեց միաձայն

3.8 ԼՍԵՑԻՆ - <<Ժամանակակից արվեստի թանգարան>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության մեջ փոփոխություն կատարելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Հաստատել <<Ժամանակակից արվեստի թանգարան>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության փոփոխությունը:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին սահմանված կարգին համապատասխան ստեղծել <<Ժամանակակից արվեստի թանգարան>> համայնքային ոչ ատևտրային կազմակերպության կառավարման խորհուրդ և իրականացնել կազմակերպության կանոնադրության փոփոխության պետական գրանցման հետ կապված անհրաժեշտ գործառույթներ և ձևակերպումներ:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ - կողմ - 41
դեմ - 0
ձեռնպահ - 0

Որոշումն ընդունվեց միաձայն

3.9 **ԼՍԵՑԻՆ** - Երևան քաղաքի գլխավոր հատակագծի ճշգրտման տեխնիկական առաջադրանքին հավանություն տալու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - Հավանություն տալ Երևան քաղաքի գլխավոր հատակագծի ճշգրտման տեխնիկական առաջադրանքին՝ համաձայն հավելվածի:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ - կողմ - 41
դեմ - 0
ձեռնպահ - 0

Որոշումն ընդունվեց միաձայն

Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Տ. Մարգարյանը Երևանի ավագանու անդամներին առաջարկեց Երևանի ավագանու հաջորդ նիստը գումարել 2010 թվականի մարտի 18-ին, ժամը 11:00-ին, և քննարկել Երևանի ավագանու անդամներին տրամադրված՝ Երևան քաղաքի 2009 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը. առաջարկի վերաբերյալ առարկություններ չեղան:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ

ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Արձանագրեց՝
Ն. Ղուկասյան